**Հայտարարություն**

Հայտարարվում է մրցույթ ՀՀ «Երևանի Ջ.Կիրակոսյանի անվան 20 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի / **12 դասաժամ** /, ռուսերենի / **13 դասաժամ** /, երաժշտություն / **4 դասաժամ**/ ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում ( Ձև 1), մեկ լուսանկար ¾ չափի

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն(Ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված թաստաթփղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **օգոստոսի 26-ը** ներառյալ,ամեն օր՝**ժամը 10:00-ից 14:00-ը**,բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **օգոստոսի 30-ինկ ժամը՝ 14:30-ին,** Ջոն Կիրակոսյանի անվան հ.20 հիմնական դպրոցում.հասցեն՝ ք. Երևան, Այգեստան9/4ա:

Տեղեկությունների համար զանգահարել 010-552881 հեռախոսահամարով: